նաւ լուծանին 'ի Կոստանդինուպոլիս 'ի ձեռն գործակալաց թագաւորացն Եւրոպիոյ · իսկ այժմ Յոյնք առանց մոռանելոյ 'ի դատ ծածկապէս առեալ են հրովարտակ, ուստի պարտ է մոռանել ընդ նոսա 'ի դատ, եւ յայտնի կացուցանել զսեփհական տեղիս մեր՝ և ծանուցանել թագաւորաց մերոց։ Դատաւորքն ասացին՝ չէ օրէն այժմ աստ մոռանել 'ի դատ, զի 'ի քննութեանս յայսմիկ ուրոյն ուրոյն նշանակին տեղիք ազգաց · իսկ եթէ ունիք զայլ ինն դատ ընդ միմեանս՝ առեալ զվաւերական գրեանս ձեր՝ գնասջիք 'ի դատարան, և անդ սահմանեմք զիրաւունս ձեր։ Կոչեցին ապա և զԹարգմանն Հայոց, և նա արար պատասխանի · որովհետեւ խոստանայք գրել ուրոյն ուրոյն զսեփհական տեղիս իւրաքանչիւր ազգաց, և յետ այնորիկ հանել զայն 'ի դատաստան և արդարութեամբ տալ վճիռ՝ հնազանդիմք։ Եւ ապա սկսեալ գրեցին զտեղիս իւրաքանչիւր ազգաց 'ի տաճարին, բայց զԹիւ սենեկացն Հայոց ոչ կամեցան մուծանել 'ի գիրն, և արձակեցան՝ խոստանալով 'ի վաղիւ վերստին դումարել զժողովն · բայց Յոյնք արդելին զայն, և առին 'ի կողմն իւրեանց զքաղաքապետն և զայլս, և սկսան ասել թէ՝ ըստ մտաց հրովարտակին մեզ անկ է շինել յանուն մեր՝ և ոչ երթամք 'ի դատարան · 'ի բազմանալ բանից՝ անկաւ դժտութիւն 'ի մէջ այլազգեաց եւ սկսան նախատել զմիմեանս վասն կաշառացն, ոմանք 'ի կողմն Հայոց էին և այլք Յունաց։

Ի սմին ժամանակի քաղաքապետն Յոպպէի Մէհէմմէտ աղա Ասու Լօպութ կոչեցեալ՝ գրաւեաց զմի մասն վանացն Հայոց՝ որ 'ի կողմն Լատինաց, և բնակեցոյց անդ զզօրս զամս 3, և արարին զայն իբրեւ աւերակ, և Հայք զկնի բազում աշխատութեան հազիւ ուրեմն կարացին դատարկել զայն։ Յափշտակեաց ապա նաեւ զերեւելի տունս և զմիերանոցս 'ի կալուածոցն Հայոց անդ 'ի Յոպպէ, զոմանս կարգեաց տեղի դատաստանի, զոմանս մաքսի, եւ զայլս բանտի, և սկսաւ ըստ հաճոյից իւրոց քակել զայնս և շինել, և զսենեակս որ 'ի վերայ եկեղեցւոյ՝ արար խոհանոց, յորմէ կասկածէր Տեսուչ վանաց լինիլ վտանգ ինչ, և 'ի պահանջել զվարձս նոցա՝ անարգանօք յետս դարձուցանէր զնոսա, ապառնայեալ հասուցանել զմեծամեծ չարիս՝